# ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
# ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտի 1

№ 4319-Ա « 26 » դեկտեմբերի 2023 թ.

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Երևանի քաղաքապետարանի և «ՀՐՇԵՋ ՇԱՀ-ԱՐ» ՍՊ և «ՆԵՄՐՈՒԹ» ՍՊ ընկերությունների /կոնսորցիում/ /այսուհետ՝ Ընկերություն/ միջև 02.05.2023թ. կնքված «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-23/73» ծածկագրով Կապալային աշխատանքների կատարման գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 1.1 կետի համաձայն՝ «Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի հենապատերի վերանորոգման աշխատանքները /այսուհետ՝ Աշխատանք/, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար: Համաձայն պայմանագրի 1.3 կետի՝ Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ համաձայն հ.2 հավելվածի:

Պայմանագրով պատվիրատուին վերապահված իրավունքների և պարտակա-նությունների իրացման արդյունքում պարզվել է, որ Կապալառուի կողմից չեն պահպանվել պայմանագրի 6.1 կետով սահմանված պահանջները, այն է՝ Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

Ընկերությունը, խախտելով պայմանագրով սահմանված պարտավորությունները, չի կատարել պայմանագրով նախատեսված աշխատանքները:

Երևանի քաղաքապետարանը, ղեկավարվելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, ինչպես նաև Պայմանագրի 3.1.4 կետի «բ» ենթակետի պահանջներով, միակողմանի /մասնակի/ լուծել է կնքված Պայմանագիրը: Պայմանագրի լուծման վերաբերյալ ծանուցումը հրապարակվել է տեղեկագրում սույն թվականի դեկտեմբերի 18-ին, և պայմանագիրը դեկտեմբերի 19-ի դրությամբ համարվում է լուծված:

Ղեկավարվելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով և նույն հոդվածի 2-րդ մասով.

1. «ՀՐՇԵՋ ՇԱՀ-ԱՐ» ՍՊ և «ՆԵՄՐՈՒԹ» ՍՊ ընկերությունները /կոնսորցիում/ ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

2. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի ղեկավարի վրա:

3. Սույն որոշման կատարման հսկողությունն իրականացնում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

**ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**